

ՊԱՆԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՔԸ*

Բանալի բառեր – պանթյուրքիզմ, «Արևելյան Թուրքեստան» (Սինցզյան), Ռ. Էրդողան, Ն. Նազարբաև, Վ. Պուտին, կրկնակի զսպման քաղաքականություն, մանիպուլյացիա, Սյունիքի դարպասներ, թուրք-չինական գաղտնի պայմանագիր:

Ինչպես և կանխատեսել էինք նախորդ **Խմբագրականում**, պանթյուրքիզմի նպատակների իրականացման համար 2009 թ. հոկտեմբերի 3-ին Նախիջևանում ստեղծված Թյուրքական խորհուրդը¹, այսպես կոչված, «Արևելյան Թուրքեստանի» (Սինցզյան) անկախության խորհրդանշական օրը՝ 2021 թ. նոյեմբերի 12-ին, Ստամբուլում հրավիրված իր 8-րդ գագաթնաժողովի որոշմամբ վերածվեց Թյուրքական պետությունների կազմակերպության²:

Այս **դիմակափոխությունն** ուղեկցվեց նույնպես խորհրդանշական իմաստ ունեցող՝ «թյուրքական քաղաքակրթության պատմական առաքելության» գաղափարի տիրաժավորմամբ, ինչն արևմտյան քաղաքակրթության միջնաբերդ Եվրոպայի՝ մարդկության պատմության մեջ ունեցած բացառիկ դերի ծաղրանկարն էր հիշեցնում: Ի վերջո, դարեր շարունակ թյուրքական ցեղերի քոչվորական կենսակերպը Եվրոպային բնորոշ «քաղաք» ու «քաղաքացի» և դրանցից ծնունդ առած «քաղաքակրթություն» (**civilization**) հասկացությունների հակոտնյան է եղել: Ուստի թվում էր, թե Չինաստանից մինչև Եվրոպա քաղաքներ ավերած քոչվորների ժառանգները պարզապես կապկել են ժողովուրդների հետամնացությունն իբրև ինքնատիպություն դիտարկող պանսլավիզմի տեսաբան Ն. Դանիլևսկու կուլտուր-պատմական համադրույթի և լոկալ քաղաքակրթությունների տեսության գերմանացի (Օ. Շպենգլեր) ու բրիտանացի (Ա. Թոյնբի) հետևորդների մեթոդաբանական ելակետը: Բայց երբ մի պահ մտովի գիծ քաշեցինք պանթյուրքիզմի նոր հավակնությունների խորհրդանշական վայրի (**Նախիջևան**) և Թյուրքական պետությունների կազմակերպության ստեղծման

* Ընդունվել է տպագրության 20.12.021:
1 Ամբողջական անվանումը՝ Թյուրքական պետությունների համագործակցության խորհուրդ:
2 Տե՛ս Քաղաքակրթական միջանցքների բախումը, «Վեմ», Եր., 2021, N 3, էջ 3:

Վեմ համահայկական հանդես, ԺԳ (ԺԹ) փարի, թիվ 4 (76), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2021

խորհրդանշական օրվա՝ **նոյեմբերի 12-ի**, այսինքն՝ «**Արևելյան Թուրքեստանի**» (Մինցզյան) միջև, սկսեցինք հասկանալ «թյուրքական քաղաքակրթության պատմական առաքելության» իրական իմաստը: Ուստի Հայաստանից գավթված Նախիջևանով սկսվող և երկու անգամ (1933 թ. և 1944 թ.) հռչակված «Արևելյան Թուրքեստանով» ավարտվող այս նախագիծը ողջ քաղաքակրթությանը նետված մարտահրավեր էր, որն ընդունվեց ինչպես Արևմուտքի, այնպես էլ Արևելքի կողմից:

Անշուշտ, պանթյուրքական խորհրդանիշների սիրահարներին ոգևորում էր այն իրողությունը, որ Ղարաբաղյան երկրորդ պատերազմից հետո էրդողանյան ցեղապաշտական ավտորիտարիզմը որոշակի ընդունելություն էր գտել Կենտրոնական Ասիայի հետխորհրդային վերնախավերի շրջանում: Մինչդեռ 1991 թվականից հետո նրանք հետխորհրդային համակարգի այն «ոսկե ռեգերվն» էին, որը ԽՍՀՄ փլուզման պայմաններում թույլ տվեց Մոսկվային պահպանել իր ազդեցությունը: Նոր ինտեգրացիայի գաղափարախոսությունը դարձավ 1920-1930-ականներին ռուսական էմիգրանտների շրջանում ձևավորված և ԽՍՀՄ-ում իր **գումեյլովյան**, իսկ հետխորհրդային շրջանում **դուզինյան** հիմնավորումները ստացած եվրասիականությունը՝ Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաևի շնորհիվ: Բայց այդ եղանակով Ռուսաստանի ծոցում «տաքացած» Ղազախստանը Մոսկվային քաղաքակիրթ կերպով հրաժեշտ տալու համար Ղարաբաղյան երկրորդ պատերազմից հետո առաջադրեց պանթյուրքիզմի գաղափարն իր նախնական՝ **պանթուրանական** փաթեթավորմամբ:

Բանն այն է, որ Ղազախստանի արդեն նախկին նախագահ Ն. Նազարբաևին էր պատկանում նաև Թյուրքական պետությունների կազմակերպության ստեղծման առաջարկը, որը հնչեց 2021 թ. մարտի 31-ին՝ այսպես կոչված «**Ադրբեջանցիների ցեղասպանության օրը**» հարավղազախստանյան **Թուրքեստան** քաղաքում նշանակված, բայց իրականում առցանց կայացած Թյուրքական խորհրդի ոչ պաշտոնական գագաթնաժողովի ժամանակ: Հարավղազախստանյան Թուրքեստանի տարածքից են ներկայիս թուրքերի ու ադրբեջանցիների նախնիները շարժվել դեպի Արևմուտք, ուստի ամենևին էլ ոչ պատահականորեն 2021 թ. մարտի 31-ին Ն. Նազարբաևն առաջարկեց Թյուրքական պետությունների կազմակերպության շտաբ-կայանը տեղակայել ոչ թե Թուրքիայում, այլ Թուրքեստան քաղաքում:

Ակնհայտ է, որ այս կենտրոնականասիական պանթուրանիզմը պանթյուրքիզմի «**դիֆուզիան**» է հետխորհրդային տարածքում, ուստի այստեղ ևս համաթյուրքական միասնության գաղափարն այլատյացության որոշակի տարրեր է պարունակում: Մինչդեռ Բալկաններում, Հարավային Կովկասում ու Հյուսիսարևմտյան Իրանում թուրքական «գորշ գայլերի» ու նրանց

ադրբեջանցի հետևորդների կողմից ներկայումս տարածվող պանթյուրքիզմը սովորական ֆաշիզմ է՝ իր բոլոր ատրիբուտներով:

Թյուրքական պետությունների կազմակերպության ստեղծումը թույլ տվեց Թուրքիային հատել այն ռուբիկոնը, որը մինչ օրս նրան բաժանում էր իր «հետկայսերական լեգիտիմության» հիմքը կազմող 1921 թ. Մոսկվայի ու Կարսի և 1923 թ. Լոզանի պայմանագրերից: Մրանով է բացատրվում Ստամբուլի գազաթնաժողովի հաջորդ օրը՝ նոյեմբերի 13-ին տեղի ունեցած խորհրդանշական իրադարձությունը՝ Դևլեթ Բահչելիի կողմից Ռ. Էրդողանին Մեծ Թուրանի քարտեզով նկարի նվիրումը: Այդ կապակցությամբ Ռուսաստանի նախագահի մամլո խոսնակի զգուշավոր հիշեցումը, որ թյուրքերի (ու նաև բոլշևիկների) **կարմիր աստղը** «թյուրքական աշխարհի կենտրոն» ու սրբավայր Ալթայում է³, վկայում էր այն մասին, որ Մոսկվան էլ իր հերթին է սկսել պանթյուրքիզմի գաղափարների մանիպուլյացիան: Տարբերությունը կրկին շտաբ-կայանի ընտրության մեջ էր. Ռ. Էրդողանի համար դա Ստամբուլն էր, Ն. Նազարբաևի համար՝ Ղազախստանի Թուրքեստան քաղաքը, իսկ Վ. Պուտինի համար՝ Ալթայը: Եվ հենց սա է **հարցի էությունը**. հետխորհրդային համակարգի փլուզման պայմաններում էրդողանյան Թուրքիայի ու պուտինյան Ռուսաստանի վերնախավերը հայտնվել են անցյալի խորհրդանիշներով քողարկվող խոր փակուղում: Գլոբալ տերություն դառնալու Թուրքիայի հավակնությունները, որոնք Ղարաբաղյան երկրորդ պատերազմի ժամանակ «լուսավորվում էին» Լոնդոնի ու Երուսաղեմի «աշտարակներից», ԱՄՆ-ի նոր վարչակազմի շնորհիվ զրկվում են իրենց հիմնաքարերից: Վերջինիս որդեգրած **կրկնակի զսպման** քաղաքականությամբ ժամանակավորապես կաշկանդվել են նույնիսկ Ռուսաստանի մեծապետական հավակնությունները:

Քանի որ գլոբալ դիմակայության առանցքը տեղափոխվում է ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջան, պանթյուրքիզմի ռազմավարության մեջ արդեն ներդրված Լոնդոնի (Մեծ Բրիտանիա), Երուսաղեմի (Իսրայել) և Մոսկվայի (Ռուսաստան) նպատակների խճանկարը շուտով ամբողջանալու է Պեկինի (Չինաստան) աշխարհաքաղաքական հայտի միջոցով: Չինացի հնագետներն էլ կարող են պարզել (եթե արդեն չեն պարզել), որ նախքան «թյուրքական աշխարհի կենտրոն» Ալթայում հայտնվելը թյուրքերի նախնիները թափառել են **Գոբի անապատում**, որտեղ «միախառնվել են» չինացիների հետ՝ ձեռք բերելով իրենց մարդաբանական տիպը: Ուստի Թյուրքական պետությունների կազմակերպության ստեղծումից առաջ Թուրքիան նախապատրաստվել է նաև չինական հակազդեցու-

3 Տե՛ս http://slim.am/%d5%a1%d5%b7%d5%ad%d5%a1%d6%80%d5%b0/8741984098408/?fbclid=IwAR3YOHuhltkT-zHlX55t5ny5IIRHfrAJShaqYEBpedwUGMn_ThEMNsrtP0 (մուտք 10.11.2021):

թյան տարբերակին, և ամենևին էլ պատահական չէր Ռ. Էրդողանի՝ «Ռուսաստանն ու Չինաստանը մերն են...» հայտարարությունը: Դրա համար ժամանակին **գաղտնի պայմանագիր** է կնքվել Չինաստանի հետ հարկ եղած դեպքում Սինցզյանի **ույղուրների** շահերը գոհաբերելու՝ Անկարայի պատրաստակամության մասին: Բայց այդ դեպքում ինչո՞ւ էր Թյուրքական պետությունների կազմակերպության հիմնարկերը նշանակվել «Արևելյան Թուրքեստանի» անկախության օրը՝ 2021 թ. նոյեմբերի 12-ին, իսկ հաջորդ օրն էլ՝ պսակվել Դևլետ Բահչելիի նվիրած քարտեզով: Վերջին մեկ տարվա ընթացքում պանթուրքական խորհրդանիշների հետևողական խաղարկման **գաղտնիքը** հենց սա է:

Բանն այն է, որ գլոբալ խաղի առանցքային դերակատար ԱՄՆ-ի դեմոկրատական վարչակազմի համար պանթուրքական խորհրդանիշները իրականում թուրքական «գորշ գայլին» Կենտրոնական Ասիայի խորքերը քաշելու խայծեր են: Դրա համար անցած աշնանը Ղազախստանի նախկին մայրաքաղաք Ալմա-Աթին հյուրընկալել էր ՆԱՏՕ-ի ամերիկացի ու թուրք սպաներին՝ այնտեղ հիմնավորվելու և ապագայում Չինաստանի դեմ ճակատ հարդարելու համար: ԱՄՆ-ին չէր մտահոգում, որ նման «տափաստանային սաֆարիում» թուրքական «գորշ գայլը» կարող է ռուսական արջի կամ չինական վիշապի կերակուրը դառնալ: Սակայն Թուրքիայի նախագահն էլ **Ռեջեփ Թայիփ Էրդողան** չէր լինի, եթե նման առիթը չօգտագործեր Ռուսաստանի և ապա Չինաստանի հետ **ստվերային խաղի** համար: Որովհետև մոտենում է Թուրքիայի Հանրապետության 100-ամյակը, ինչը պահանջում է շրջապատող երկրներից հողակտորներ պոկելու և Ադրբեջանի հետ ուղղակի ցամաքային կապ ապահովելու, այսինքն՝ հայկական **Սյունիքի դարպասները** բացելու միջոցով վերականգնել խալիֆայթը: Եվ քանի որ պանթուրքական խաղին հակադրված ազդակների **ատլանտյան հզորությունը** չեզոքացրել էր Ռ. Էրդողանի նկրտումները, ուրիշ ո՞վ կարող էր հակակշռել նրան, եթե ոչ Չինաստանը: Ուստի վերջինիս թեթև շանտաժի ենթարկելու համար Ռ. Էրդողանը 2021 թ. նոյեմբերի 12-ին հիշեցրեց «Արևելյան Թուրքեստանի» (Սինցզյան) անկախության օրվա մասին՝ զուգահեռաբար իր սպաներին ուղարկելով Ղազախստան՝ Ալմա-Աթիում ամերիկացիների հետ գործակցելու համար: Այնուհետև Ռ. Էրդողանը չինական կողմին հիշեցնելու էր ույղուրների շահերի գոհաբերման Թուրքիայի պատրաստակամությունն ամրագրող թուրք-չինական գաղտնի պայմանագրի մասին: Իսկ դրան հավատարիմ լինելու և Ղազախստանում ամերիկացիների հետ չհամագործակցելու փոխարեն՝ չինացիներից էլ խնդրելու էր «աննշան ծառայություն» մատուցել Զանգեզուրի միջանցքը բացելու հարցում: Այսինքն՝ Սյունիքի վրա Ադրբեջանի հարձակման դեպքում կրկնել

Ղարաբաղյան երկրորդ պատերազմի ժամանակ ՄԱԿ-ի ԱԽ-ում դրված **չինական վետոն**:

Թուրքիայի նախագահին մի պահ թվում էր, թե «Զանգեզուրի միջանցքի» վրա դրված եվրոատլանտյան տարուն հաղթահարելու համար եկել է թուրքական ավանդական «ձոձանակը» ամերիկացիների ու չինացիների արանքում տատանելու ժամանակը: Մինչդեռ ԱՄՆ-ն ու Չինաստանը ժամանակի ու տարածության **արժեքային չափումներում** գտնվող գերտերություններ են, իսկ ահա Ռուսաստանի թվացյալ բարեկամությունը ժամանակավոր է ու խախտու: Բայց Ռ. Էրդողանը իսկական էքստրազի մեջ էր. 2021 թ. նոյեմբերի 12-ի **Ստամբուլի** գազաթնամուղովով խորհրդանշված «Արևելյան Թուրքեստանի» անկախության օրվան հաջորդեց **Կոջաեղիում** նրա կուսակիցների կազմակերպած գիտաժողովը՝ 1945 թ. դեկտեմբերի 12-ին հռչակված «**Հարավային Ադրբեջանի**» անկախության օրվա առթիվ: Այս անգամ էլ Իրանին սպառնալով «Հարավային Ադրբեջանի» անկախության հեռանկարով՝ Թուրքիային հաջողվեց կարճ ժամանակով նրան ներքաշել Ադրբեջանի հետ համագործակցության մեջ: Վճռական պահին «Զանգեզուրի միջանցքի» հարցում Իրանի չեզոք դիրքորոշումն ապահովելու համար Իլիհան Ալիևն էլ բարենպաստ պայմաններ առաջարկեց Թեհրանին սեփական բեռները Ադրբեջանի տարածքով տեղափոխելու հարցում: Անշուշտ, դրան զուգահեռ, նա նաև դաշույն է սրում Իրանի թիկունքում՝ Արաքսի հովտում կառուցելով օդանավակայաններ ու **հրեական կիբուցիներ**:

Այսպիսով՝ Թուրքիայի զսպման ամերիկյան քաղաքականության ռուսական, չինական և իրանական այլընտրանքներն ու միաժամանակ հակակշիռները ստեղծելու Ռ. Էրդողանի համառ ու հետևողական փորձերը, անցած տարեվերջին հասնելով իրենց գազաթնակետին, լուսարձակեցին այն իրողությունը, որ Թուրքիան եռանդուն կերպով լծվել է **պանթյուրքական խորհրդանիշների պանդորայի արկղը բացելու գործին՝ բացարձակ առաջնահերթություն համարելով Սյունիքի դարպասների գավթումը**: Դրա համար էր վերջին ամիսներին նա գործի դրել նաև Վ. Պուտինի ձեռքերն Ուկրաինայով կապելու հնարքը՝ առաջարկելով իր միջնորդական ջանքերը, իսկ մյուս կողմից Կիևին բայրաքթարներ մատակարարելով հասունացնելով **բախումնային սցենարը**: Բայց անգամ Ռուսաստանի չեզոքությունը և ՄԱԿ-ի ԱԽ-ում Չինաստանից ակնկալվող վետոն դեռևս բավարար չէին «Զանգեզուրի միջանցքը» ուժային եղանակով բացելու համար: Քանզի «կապերը կտրած» Ռ. Էրդողանին իր տեղը ցույց տալու համար ԱՄՆ-ն իր հզոր ֆինանսատնտեսական մամլիչով մի քանի օրվա ընթացքում ուղղակի ճզմեց Թուրքիայի տնտեսությունը, որից հետո վերջինս ստիպված էր ապավինել հայ-թուրքական գրկախառնությամբ

մեզ **նրբորեն խեղդելու** տարբերակին: Բայց դա էլ բավարար չէր ԱՄՆ-ի համար. տարեվերջին Ռ. Էրդողանից պահանջվեց Թուրքիայի հրամանատարական դերակատարությունը Ուկրաինայի թիկունքն ապահովող ՆԱՏՕ-ի հատուկ նշանակության ուժերում, որոնք, ինչպես նշեցինք, հայտնվել էին նաև դազախական **Ալմա-Աթիում**:

Քանի որ Եվրոպայում էներգակիրների գների կտրուկ բարձրացման պատճառով ԱՄՆ-ի կրկնակի զսպման քաղաքականության ուկրաինական նժարի գործարկման ժամկետները դեկտեմբերից տեղափոխվեցին փետրվար, վաղ գարնանն այստեղ սպասվող սրացումներին նախորդեցին դազախստանյան իրադարձությունները: ԱՄՆ-ի ֆինանսատնտեսական ճնշամիջոցներով Սև ծովում կրկին «ատլանտյան ծովահենի» վերածված Թուրքիայի դեկավարը Ռուսաստանի արագ հակախաղի հետևանքով Ղազախստանում գրկվեց նույն «առաքելությունը» իրականացնելու հնարավորությունից, իսկ Թյուրքական պետությունների կազմակերպության պատվո նախագահ Ն. Նազարբաևը՝ իր լծակներից: Ուրեմն մի պահ իրեն պանթյուրքիզմի խորհրդանիշ գորշ գայլի հետ շփոթած Ռ. Էրդողանը ծանոթ մուլտֆիլմի ծերացած Աքելլա գայլի նման երկու անգամ վրիպեց ու հայտնվեց խոր փոսի մեջ: Պատճառն ակնհայտ է. երբ ամերիկացիները թուրքերից ստացան Ուկրաինայի շուրջ իրենց ակնկալած խոստումները, ռուսները Ղազախստանում նրանցից անմիջապես խլեցին գլոբալ դիմակայության ամերիկա-չինական առանցքը խաղարկելու հնարավորությունը՝ Ուկրաինայի ու Ղազախստանի հարցերը մեկ փաթեթով տեղափոխելով Արևմուտք-Ռուսաստան **դիմակայության կամ համագործակցության** հարթություն: Այս նժարներից երկրորդի հետագա ծանրացման դեպքում միանգամայն հնարավոր է դառնում նոր աշխարհակարգում Ռուսաստանի տեղի ու դերի հստակեցման խաղաղ-բանակցային տարբերակը՝ Կրեմլում նոր բարեփոխիչի հայտնության միջոցով: Անշուշտ, առաջիկայում կողմերը դեռ կարող են բախվել Ուկրաինայում, բայց քանի որ նրանց հակամարտության հետագա խորացումից շահելու է միայն Չինաստանը, գլոբալ դիմակայության մուր թունելի հետևում սկսել է լույս երևալ: Որովհետև հայկական Սյունիքի դարպասները ջարդելու համար պանթյուրքական խորհրդանիշների պանդորայի արկղը բացելու և դրանք աշխարհաքաղաքական շանտաժի գործիքների վերածելու իր համառ փորձերով Ռ. Էրդողանն արդեն բացահայտել է սեփական երկրի **գոյության «խմաստը»**՝ քաղաքակրթությանը մարտահրավեր նետած թյուրքական հորդանների համաշխարհային տիրապետության սին ձգտումը: Որպես արդյունք՝ անցած մեկ տարվա ընթացքում ԱՄՆ-ի, Ռուսաստանի ու նաև Չինաստանի համար աննկատ կերպով ստեղծվել է ռազմավարական շահերի կոնսենսուս ոչ թե

«Զանգեզուրի միջանցքի» բացման, այլ Թուրքիայի՝ իբրև պետության գոյությունը կասկածի տակ դնելու անհրաժեշտության շուրջ:

Ուստի վերջին ձախողումներից հետո Հայաստանին մեկնված Ռ. Էրդողանի թուլացած ձեռքը սեղմելու փոխարեն՝ մեզ հարկավոր է մտածել գլոբալ մակարդակում արդեն ուրվագծվող **Թուրքիայի բաժանման հեռանկարը** սեփական ազգային շահերի ուսպնյակի մեջ բեկելու մասին: Դրա համար նախքան Արևմուտք-Ռուսաստան անհեռանկարային դիմակայության՝ փակուղի մտնելու հանգրվանը **ազգային ընտրանու** ձևավորման խնդիր ունենք:

Խմբ.

THE SECRET OF THE PAN TURKIST SYMBOLS

Key words – Pan-Turkism, “East Turkestan” (Xinjiang), R. Erdogan, N. Nazarbayev, V. Putin, policy of double restraint, manipulation, Syunik gates, secret Turkish-Chinese agreement.

Edit.

ТАЙНА ПАНТЮРКИСТСКИХ СИМВОЛОВ

Ключевые слова – пантюркизм, «Восточный Туркестан» (Синцзянь), Р. Эрдоган, Н. Назарбаев, В. Путин, политика двойного сдерживания, ворота Сюника, секретный турецко-китайский догоор.

Ред.